# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012թ. հունվարի 31 թիվ 10-Ա

## ՄՈՒՇԵՂ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ և 96-րդ հոդվածներով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա/ ենթակետով, 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը հաստատելու մասին>> թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետը և Մ. Գալստյանի 2012 թվականի հունվարի 31-ի դիմումը՝ ***կարգադրում եմ.***

1. 2012 թվականի հունվարի 31-ից Մուշեղ Կոլյայի Գալստյանին նշանակել << Սասունիկի Գևորգ Չաուշի անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված տնօրենի նշանակումը՝ նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ԱՍԱՏՐՅԱՆ